Դավիթ Միհրի Սեղրակյան

Ծնվել է 1983թ. ապրիլի 25-ին Երևանում, ծառայողի ընտանիքում:
1990թ. ընդունվել և 1999թ. ավարտել է Երևանի հ. 17 միջնակարգ դպրոցը:
1999թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետ: 2003թ. ավարտել է նշված ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2005թ.՝ մագիստրատուրան:
2003-2005թթ. ծառայել է Հայաստանի Հանրապետության զինված ուժերում:
2005-2009թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի հեռակա բաժնում:
2006թ. հուլիսի 1-ից մինչև 2007թ. օգոստոսի մեկը աշխատել է Երևանի Էրեբունի համայնքի ղեկավարի խորհրդական, իսկ 2007թ. օգոստոսի 1-ից մինչև 2009թ. օգոստոսի մեկը՝ նույն համայնքի (2009թ. հունիսից՝ վարչական շրջանի) ղեկավարի տեղակալ:
2009թ. մայիսին ընտրվել է Երևանի ավագանու անդամ, այնուհետև՝ հրաժարվել անդամությունից:
2010թ. ընդունվել է Լոնդոնի Տնտեսագիտության և Քաղաքական գիտությունների դպրոց:
Ներկայումս տարեկետման մեջ է:
Արտադրական, առևտրային և սպասարկման ոլորտի գործունեություն իրականացնող «Դավիթ և Էլինա» ՍՊԸ-ի հիմնադիրը և 100% բաժնետերն է: Միաժամանակ հանքարդյունաբերության ոլորտի գործունեություն իրականացնող «ԴԻ ԷՅ Մայնինգ» ընկերության 50% բաժնետեր է:
2013 թվականի մայիսի 5-ին Հայաստանի Հանրապետական կուսակցության համամասնական ցուցակով ընտրվել է Երևանի ավագանու անդամ:
Հայաստանի Հանրապետական կուսակցության անդամ է: